

## ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՍԱՄԲԻՍՏԸ ԵՎ ՃԱՆԱԶՎԱԾ ՄԱՐԶԻՉԸ

Ռոստովի "Էքսպրեսս" մարզադահլիճում տեղի ունեցան Ռոստովի մարզի գավառապետի գավաթի համար սամբոյի գծով համառուսաստանյան մրցումներ: Ներկա էին նաև գավառապետ Վասիլի Յուրևիչ Գոլուբևը, մարզի կառավարության անդամներ, սպորտի տարբեր ձևերի հայտնի մարզիկներ, Սուվորովյան և Կադետների ուսումնարանների սաներ, բուհերի ուսանողներ, սպորտդպրոցների շատ մարզիկներ իրենց աշակերտների հետ:

Գեղեցկության և ուժի այդ տոնի բացման ժամանակ ելույթ ունեցավ գավառապետ Վասիլի Յուրևիչ Գոլուբևը: Ցանկանալով մրցումների մասնակիցներին հաջողություններ և անվանելով սամբոն բուն ռուսական մարզաձև, նա վերհիշեց, թե ինչպես ինքը պատանի ժամանակ ածխահատների փոքրիկ ավանում ապրելիս դասերից հետո շտապում էր սամբոյի պարապմունքների:

Մրցումների գլխավոր նվերը՝ մեծ գավաթը, ստացավ Ռոստովի մարզի հավաքական թիմը սամբոյի մարզային ֆեդերացիայի նախագահ Հարեթ Վարդանյանի գլխավորությամբ:

Ամենաշատը ոսկե մեդալներ նվաճեցին մարզիչ Եգոր Պանտելևի աշակերտները՝ Վադիմ Պոտոմիկովը, Վադիմ Նեմեշը և Վորոտնիկովը: Հաղթողների թվում են Բուլատ Մահամեդովը և Ալբեր Ծաովը Արմավիրից, Իգոր Նովիկովը Կաբարդինո-Բալկարիայից, Կոնստանտին Բյաբուշկան Գուկովո քաղաքից և ծանրաքաշ Վելիխան Դալոյլանյանը Անապայից: Հաղթողները և մրցանակակիրները ստացան դիպլոմներ, փոքր գավաթներ և դրամական պարգևներ:

Հաջորդ օրը Ռոստովի "Հերկուլես" մարզադահլիճում անցկացվեց մեկ ուրիշ սպորտային տոն՝ Ռոստովի մարզի առաջնությունը, որը նվիրված էր սամբոյի Համառուսաստանյան օրվան: Լարված մրցումները ավարտվեցին ուշ երեկոյան: Հաղթողները և մրցանակային տեղեր գրավողները



ստացան պատվոգրեր, մեդալներ և նվերներ:

Այո, սամբոն Ռոստովի մարզում լայնորեն տարածված սպորտաձև է: Եվ ես կուզեմայի առանձնապես նշել սամբոյի մարզիկների ամենատարեց մարզիչի՝ սպորտի վարպետ լենինականցի Աշոտ Բյեկյանի ավանդը սպորտի այդ ձևի պարզացման գործում: Շուրջ 60 տարի նա իր ծննդավայրի ակումբում պրաքտիկում է պատանիների հետ: Նրա սաների թվում կան մեր մարզի, Հարավային օկռուգի, Ռուսաստանի չեմպիոններ, հայտնի մարզիչներ, օրինակ՝ Ալլա Բաբանան:

Աշոտ Բյեկյանը Զալթրի թիվ 1 միջնակարգ դպրոցը ավարտելուց հետո անբասիր կատարել է իր պիմվորական պարտքը հայրենիքի հանդեպ:

Ծառայել է օդային ուժերում, սկսել Մոռոկոսում, ապա՝ Գյումրիում: 800 անգամ ցատկել է պարաշյուտով: Նա հեռակա կարգով սովորել է Տագանոգի ռադիո-տեխնիկական ինստիտուտում:

Էլեկտրոնիկայի գծով ինժեներ 76-ամյա Աշոտ պապիկը դեռ չի ուզում անցնել վաստակած հանգստի՝ երեխաների հետ պարապմունքներ է անցկացնում ակումբում:

Վիկտոր ՄՐԱՊԻՆՆՈՎ  
Նկարում՝ Ռուսաստանի սամբոյի ակումբների վաստակավոր մարզիչ Աշոտ Բյեկյանը իր աշակերտների՝ մարզի մրցանակակիրներ Վալերիա Նեչանայի և Իվան Պլիսկայի հետ:

## ԳՈՒՆԱՎՈՐ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՏԱՐԱՐԸ

ԼՐԱՆՈՒՄ Է ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԲԳԱՐԻ ԱԴԱՄՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 135-ԱՄՅԱԿԸ



սիայում: Ապա Ադամյանը վերադարձել է Բեռլին, որտեղ եռանդորեն սկսել է իր հարմարանքի ստեղծման գործը:

1905 թվականին Հովհաննես Ադամյանը տվել է հաղորդվող պատկերը կորերի բաղադրելու գաղափարը, ընդ որում այդ կորերի ամպլիտուդները համապատասխանել են հաղորդվող պատկերների պայծառությանը:

1907-ին Ադամյանը Բեռլինում Արտոնագրերի կայսերական բյուրոյին է ներկայացրել "Էլեկտրականության միջոցով հաղորդվող պատկերի կամ մի շարք պատկերների սևեռման և կրկնակի վերարտադրման սարքը" (արտոնագիր 197443, մարտի 28), ուր առաջին անգամ արտացոլված և հիմնավորված էր պատկերի սև-սպիտակ հաղորդման գաղափարը: Նույն թվականին Ադամյանը ներկայացրել է "Օսցիլոգրաֆի հայելուց անդրադարձված լուսային փնջի տեղական տատանումները Հայելի խողովակի պայծառության տատանումների փոխարկվող հարմարանքը" (արտոնագիր 197183, հուլիսի 12), որով սկիսվեց դրվել երկգույն հեռուստատեսության պարզացմանը:

Ի տարբերություն այն ժամանակվա շատ գյուտարարների, Ադամյանը կարողացել է իրագործել իր նախագիծը, քանի որ ունեցել է անհրաժեշտ դրամական միջոցներ (ծնողների միջոցները), գտել է վարպետներ, որոնք կարողացել են պատրաստել

անհրաժեշտ դետալները և հարմարանքը աշխատանքային վիճակի հասցնել:

1907-ին Հովհաննես Ադամյանը իրագործել է Բեռլինից հաղորդալարերով 600 կիլոմետր հեռավորության վրա գունավոր պատկերի հաղորդման առաջին փորձն աշխարհում: Նա հեղինակավոր վկաներ է ունեցել, որոնք հաստատել են, թե քանիցս տեսել են գունավոր հաղորդումներ, որոնք ցուցադրվել են Վալի հեռավորության վրա նրա հարմարանքի օգնությամբ: Այդ հանդիսատեսների թվում հարկ է նշել այն տարիներին Բեռլինի համալսարանի ձանաչված պրոֆեսորներ Ա. Կորնիև և Բ. Գլադեյլին, որոնք բավականին մանրամասն պատմել են իրենց գրքում Հովհաննես Ադամյանի աշխատանքի և հայտնագործության մասին:

1913 թվականին պատկերները հաղորդելու համար փոքր չգայնության և մեծ իներտության սելենի փոխարեն Ադամյանը առաջարկել է "Միջանկյալ կլիշեի" համակարգը: Նույն տարվա վերջին նա տեղափոխվել է Պետերբուրգ: 1921 թվականին Մոսկվայում համառուսաստանյան էլեկտրատեխնիկական VIII համագումարում Ադամյանը Վեկուցել է լուսանկարչական պատկերները հեռավոր տարածությունների վրա հաղորդելու իր ստացած արդյունքների մասին, իսկ 1930-ի հուլիսի 30-ին իրականացրել լուսահեռագրի

հաղորդումը Մոսկվայից Լենինգրադ:

1925 թվականի փետրվարին Ադամյանը ներկայացրել է գունավոր հեռուստատեսության (եռագույն) հաջորդական համակարգի առաջին նախագիծը՝ "Անլուսաթափանց արգելքի միջոցով տեսնելու սարքը": Այդ սարքի հիմնական տարրերից էր գունաանջատումը (հաղորդիչում) և գույների միախառնումը (ընդունիչում) իրականացվող Նիպկովի բարեփոխված սկավառակը, որը կոչվեց "Ադամյանի սկավառակ": Նույն տարում Երևանի համալսարանում ստեղծված հատուկ լաբորատորիայում Ադամյանը պատրաստել, գործողության մեջ ցուցադրել է "Հեռատես" եռագույն հեռուստացույցը:

Հովհաննես Ադամյանի առաջարկած եռագույն հեռուստատեսությունն առաջին անգամ կիրառվել է Լոնդոնում, 1928 թվականին:

1941-1951 թվականներին Ամերիկայի Միացյալ Նահանգների "Կոլումբիա" (CBS) ռադիոընկերությունը Նյու Յորքում կատարել է փորձնական ցուցադրում, իսկ 1951-1953-ին Հովհաննես Ադամյանի համակարգը ընդունվել է որպես կայուն համակարգ և նրանով ցուցադրվել գունավոր պատկերներ:

Հովհաննես Ադամյանը մահացել է 1932 թվականի սեպտեմբերի 12-ին, Լենինգրադում, թաղվել է տեղի հայկական գերեզմանատանը: 1970 թվականի հունիսի 30-ին Ադամյանի աճյունը փոխադրվել է Երևանի քաղաքային պանթեոն: